ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ՝

2019Թ-Ի 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

2019- հուլիս

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2019Թ. 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019թ-ի 1-ին կիսամյակում Սևան համայնքում աշխատանքներն իրականացվել են՝ համաձայն համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրի դրույթներին, 2019թ. տարեկան աշխատանքային պլանի, համայնքի 2018թ. բյուջեի՝ հաշվի առնելով համայնքի առկա ռեսուրսները, առանձնահատկությունները, զարգացման գերակա ուղղությունները, նախապես քարտեզագրված ծրագրային առաջնահերթությունները:

Բյուջե - 2019

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Համայնքի բնականոն կյանքի ապահովման և տեղական իշխանության իրականացրած գործունեության վավերագիրն արտացոլվում է ֆինանսական գլխավոր փաստաթղթում:

Համաձայն ներկայացված ամփոփագրի՝ համայնքի 2019 թվականի 1-ին կիսամյակի բյուջեի եկամուտների պլանը կատարվել է 89.9%-ով. 327.2մլն. դրամ ճշտված պլանային եկամուտների դիմաց հավաքագրած և պետական բյուջեից հատկացված դոտացիան կազմել է 294.3մլն. դրամ: Նախորդ՝ 2018թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ համայնքի բյուջեն գերակատարվել է 15.7%-ով, կամ ավել եկամուտները կազմել են 40.0մլն. դրամ: 2019 թվականի 1-ին կիսամսյակի բյուջեի վարչական մասը կատարվել 101.1%-ով / պլան՝ 277.2մլն. դրամ, փաստացի՝ 280.1մլն. դրամ /:

2018 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատ բյուջեի 2019 թվականի առաջին կիսամսյակի վարչական մասում ավելացված եկամուտները կազմել են 17.5մլն. դրամ կամ վարչական բյուջեի եկամուտները 2018 թվականի համեմատությամբ ավելացել են 10.4%: Վարչական բյուջեում սեփական եկամուտները կատարվել են 103.3%-ով / պլան՝ 89.1մլն. դրամ, փաստացի՝ 92.0մլն. դրամ /:

Նախորդ՝ 2018 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սեփական եկամուտները գերակատարվել են 28.7%-ով, կամ սեփական եկամուտների հավաքագրումն ավելացել 20.5մլն. դրամով: 2019 թվականի 1-ին կիսամսյակի ֆոնդային բյուջեն կատարվել է 54.8%-ով / պլան՝ 80.0մլն. դրամ, փաստացի՝ 43.8մլն.դրամ/: 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ֆոնդային բյուջեի եկամուտները ավելացել են 36.2մլն. դրամ կամ 22.1անգամ:

Նախորդ՝ 2018 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սեփական եկամտատեսակների գծով ապահովվել է աճ, ընդհանուր 11.8մլն. դրամ, բացառությամբ գույքահարկի, հողի հարկի, տեղական տուրքերի, որոնք նվազել են ընդհանուր 8.9մլն. դրամով:

Բյուջեի կատարման ապահովման նպատակով տարվող աշխատանքներն ամենօրյա են, նպատակաուղղված. նպատակն էլ հստակ է՝ ունենալ հավաքագրումների

բարձր տոկոսայնություն, համայնքային եկամուտներն էլ ուղղել համայնքապահպան, սոցիալական և տնտեսական ծրագրերի իրականացմանը, ընթացիկ աշխատանքների կատարմանը:

Ծախսեր

Համայնքի բյուջեի ծախսերը կատարվել է 82.8%-ով: 332.6մլն. դրամ պլանային ծախսերի դիմաց կատարվել է 275.4մլն. դրամի ծախս, կամ թերակատարումը կազմել է 57.2մլն. դրամ, որը պայմանավորված է ՀՈԱԿ-ների հունվար ամսվա չաշխատելով, նաև մշակույթի պալատի հիմնանորոգմամբ: Ըստ առանձին ոլորտների՝ համայնքի 2019թ. բյուջեի 1-ին կիսամյակի ծախսերը կատարվել են տարբեր տոկոսներով:

Վարչական բյուջեի ծախսերը կատարվել են 92.3%-ով / 280.8մլն. դրամ՝ պլան, 259.2մլն. դրամ՝ փաստացի ծախս/: Թերակատարումը կազմել է 21.6մլն. դրամ, այդ թվում՝ 7.2մլն. դրամ՝ ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ, 7.8մլն.դրամ՝ կրթության և մշակույթի ծախսեր, 0.3մլն. դրամ պահուստային ֆոնդի ծախսեր և այլն:

Կրթության, մշակույթի ծախսերը ֆինանսավորվել են միջին հաշվով 87.9%: 2018 թվականի 1-ին կիսամյակի համեմատությամբ 2019 թվականի նույն ժամանակահատվածում վարչական բյուջեի ծախսերը կատարվել են 259.2մլն. դրամ կամ 21.1%-ով ավելի: 2019 թվականի 1-ին կիսամյակի ֆոնդային մասի ծախսերը կատարվել են 56.2%-ով /պլան՝ 81.8մլն. դրամ, փաստացի ծախս՝ 45.9մլն. դրամ/: Նախորդ՝ 2018 թվականի 1-ին կիսամյակի համեմատությամբ ֆոնդային բյուջեի գծով ավել ծախսեր են կատարվել 32.3մլն. դրամ, կամ մոտավորապես 23.7 անգամ ավել:

Պարտքեր

Համայնքի բյուջեի գծով պարտքերը 01.01.2019թ. դրությամբ կազմել են 54.5մլն. դրամ, այդ թվում՝ փողոցների փոսային նորոգման գծով՝ 49.8 մլն. դրամ, այլ պարտքեր՝ 4.7 մլն. դրամ: 01.07.2019թ. դրությամբ համայնքի բյուջեի պարտքերը կազմում են 20.0մլն. դրամ, 1-ին կիսամյակի ընթացքում փողոցների փոսային հիմնանորոգման պարտքից մարվել է 33.3մլն. դրամ: 6 ամսում համայնքի բյուջեից մարվել է 34.5մլն. դրամի ընդհանուր պարտք:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսավորում և ծախսային մասեր

Համայնքում գործում է 5 նախադպրոցական ուսումնական հաստատություն: Մանկապարտեզներում ծնողական վճարները զրոյացված են, և ֆինանսավորումն ամբողջությամբ կատարվում է համայնքի կողմից

Հ/Հ	Անվանումը	Աշխատավարձ և հարկեր	Կոմունալ ծախսեր	Գրասենյակային _____ այլ ծախսեր	Սննդի ծախսեր	Ընդամենը ծախսեր	Համայնքի կողմից ֆինանսավորում
1	թիվ 1 «Բողբոջ» մ/մ	11363.8	1387.1	-	2146.2	14926.0	14897.1
2	թիվ 2 «Զարթոնք» մ/մ	8745.0	803.2	32.6/1446.1	1398.1	12425.0	12425.0
3	թիվ 3 «Հեքիաթ» մանկ.	14725.1	1429.5	30.5	4479.8	20342.0	20664.9
4	թիվ 4	11761.4	1559.9	50.0	3276.4	16888.0	166477

	«Գալիք» մ/մ						
5	Գագարինի մանկ.	5113.9	1075.5	31.8	1233.6	7442.0	7454.8
	ընդամենը	51709.2	6255.2	144.9/1446.1	12534.1	72023.0	72089.3

Հողի հարկ և գույքահարկ

Համայնքի եկամուտների կենսունակ աղբյուրը իրավաբանական և ֆիզիկական անձանց հողի, գույքահարկի հարկման գործընթացից գոյացող գումարներն են: Այս ոլորտը կարիք ունի անընդհատ վերանայման՝ հարկման բազայում անհրաժեշտ փոփոխությունների ներառմամբ, համայնքում գործող ստորաբաժանումների հետ մշտական աշխատանքի միջոցով:

Համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար գույքահարկի կիսամյակային պլանը նախատեսված է եղել 12.0մլն. դրամ: Հավաքագրումն կազմել է 11մլն. 890հազ դրամ / 99.1% /: Համայնքի վարչական տարածքում գտնվող հողի հարկի հավաքագրումը, ըստ պլանային թվի, եղել է 4մլն. 500 հազ. դրամ: Հավաքագրվել է 2մլն. 477հազ. դրամ / 55.1% /, փոխադրամիջոցների գծով գույքահարկի վճարումը կատարվել է 82.3%-ով. պլանային 35մլն. 500 հազ. դրամի դիմաց հավաքագրվել է 29մլն. 212 հազ. դրամ:

Առևտրի և սպասարկման գծով տեղական տուրքերի՝ պլանավորված 4մլն. 750հազ. դրամի դիմաց կատարողականը կազմում է 4 մլն. 285 հազ. դրամ /90.2%/:

Պետական տուրքի գծով նախատեսված 3մլն. 550 հազ. դրամի դիմաց մուտքագրվել է 3մլն. 916 հազար / 110.3% /:

Այլ եկամուտներ /հողի վարձավճար, ինքնակամ շինությունների օրինականացում, կենցաղային աղբահանություն, ծնողական վարձավճարներ,կառուցապատում, տարածքների վարձակալություն և այլն/ պլանային 28մլն. 760հազ. դրամի դիմաց հավաքագրումը կազմել է 40մլն. 210հազ. դրամ /139.8%/:

ՔԿԱԳ ծառայությունների գծով պլանային 2մլն. 146հազ. դրամի դիմաց մուտքերը կազմել են նույնքան դրամ /100%/ :

Քաղաքաշինություն

Քաղաքապետարանի ճարտարապետա-շինարարական բաժնի կողմից տրամադրված ամփոփ տեղեկագիրն էլ արձանագրում է հետևյալը.

2019թ-ի 1-ին կիսամյակում աճուրդային կարգով օտարվել է 595.72քմ մակերեսով հողատարածք, որից՝ 506.5քմ-ը՝ բնակելի կառուցապատման, 8600.71քմ-ը՝ հասարակական կառուցապատման համար. համայնքային բյուջե է մուտքագրվել 8.037.190հազ. դրամ:

Շարունակվել է ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման գործընթացը: Ընդունվել է համայնքի ղեկավարի 54 որոշում, համաձայն որի՝ օրինականացվել են ավտոտնակ, տաղավար, ինչպես նաև համայնքի տարածքում

գտնվող վարչական շենքերում, բնակարաններում օրինականացվել են ինքնակամ կատարված ձևափոխման աշխատանքները :

Ընդունվել է հասցեի տրամադրման 47 որոշում, համայնքային բյուջե է մուտքագրվել 47.000 դրամ:

Տրվել է 14 շինարարական թույլտվություն, ճարտարապետահատակագծային 20 առաջադրանք, համայնքային բյուջե է մուտքագրվել 54.000 դրամ :

Կայացվել է համայնքի ղեկավարի 41 որոշում հողի ուղղակի վաճառքի վերաբերյալ:

Կազմվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ 3 գործ, որի մասով համայնքի բյուջե է մուտքագրվել 600.000 դրամ:

Ճանապարհաշինություն

Ճանապարհները և փողոցները համայնքների դեմքն ու դիմագիծն են ամբողջացնում, միաժամանակ բարեկարգ ու ներկայանալի քաղաքների այցեքարտն են:

Սևան համայնքի համար ևս ճանապարհաշինական աշխատանքներն առաջնահերթություն են և դրանց ուղղությամբ արդեն իսկ մշակված ծրագրերը քայլ առ քայլ լուծում են ստանում նաև այս տարի:

Ճանապարհաշինարարական աշխատանքների մեկնարկը տրվեց համայնքի փողոցների ասֆալտբետոնյա ծածկույթների քայքայված տեղամասերի փոսային նորոգմամբ և ճաքալցմամբ: Քաղաքի գլխավոր՝ Նաիրյան փողոցին հաջորդել են Զ. Անդրանիկի անվան հրապարակի շրջակայքը, Խաղաղության, Սայաթ-Նովա, Ս. Սևանեցի, Գրիբոյեդով, Նալբանդյան, Աբովյան, Էներգետիկների, Հրազդան, ինչպես նաև Գագարին գյուղի Թումանյան, Բաղրամյան և Կոմիտաս փողոցները:

Աշխատանքների ընդհանուր ծավալն ընդգրկել է 1800քմ, որն իրականացվել է համայնքային բյուջեի միջոցներով:

Ճանապարհաշինական այս աշխատանքներին զուգահեռ այս տարի համայնքում տարվա սկզբին նախատեսված էր նաև մի շարք փողոցների ասֆալտապատում: Դեռևս փետրվար ամսին համայնքապետարանը ասֆալտապատման աշխատանքների իրականացման համար սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում, հայտեր է ներկայացրել ՀՀ կառավարություն:

«Սևան համայնքի 5-րդ միկրոթաղամասի /Թումանյան փողոց/ և Գագարին գյուղի /Գայի փողոց/ ճանապարհների ասֆալտապատման աշխատանքների իրականացում» և «Սևան քաղաքի Չարենց փողոցի ասֆալտբետոնե ծածկույթի հիմնանորոգում /Չարենց-Շահումյան խաչմերուկից մինչև Չարենց-Ելենովկա խաչմերուկ/» ծրագրերն արժանացել են հավանության, որին հաջորդել է ծրագրային փաթեթների ներկայացումը:

Սուբվենցիոն տնտեսական ուղղվածության յուրաքանչյուր ծրագրերի իրականացման համար համայնքային ներդրումը 40% է, կառավարության ներդրումը՝ 60%:

Սևան քաղաքի Թումանյան փողոցը ընդգրկում է 6853քմ, երկարությունը՝ 979գծմ, միջին լայնությունը՝ 7մ: Ծրագրով նախատեսվել է ասֆալտապատում կատարել 4282քմ-ի վրա:

Աշխատանքներն արդեն ավարտված են:

Գագարին գյուղի Գայի փողոցը ընդգրկում է 10735քմ, երկարությունը՝ 1130գծմ, միջին լայնությունը՝ 9.5մ:

Ծրագրով նախատեսված էր փողոցի 2460քմ ասֆալտապատման աշխատանքների իրականացում: Այս փողոցում ևս աշխատանքներն արդեն ավարտվել են:

Ծրագրի ընդհանուր արժեքը եղել է 48.385.920 հազ. դրամ մրցութային փաթեթների ամփոփումից հետո:

Աշխատանքների ընթացքում կարիք է առաջացել լրացուցիչ ծախսերի, և վերջնական գումարը կազմել է 53.210.820 հազ. դրամ, որից 40%-ը՝ համայնքային ներդրում:

Նախապես, ըստ նախահաշվային փաստաթղթերի, ծրագրային արժեք է ներկայացվել 86.049.36 հազ. դրամ:

Սուբվենցիոն հաջորդ ծրագիրը Չարենց փողոցի մի հատվածի ասֆալտապատումն է: Փողոցի 9225քմ հատվածը 2 փուլով ասֆալտապատվել է 2018թ-ին՝ համայնքային բյուջեի միջոցներով և համայնքին տնտեսական ենթակառուցվածքի զարգացմանն ուղղված սուբվենցիոն «Սևան քաղաքի Չարենց փողոցի հիմնանորոգում և արդիականացում» ծրագրի շրջանակներում:

Փողոցի մյուս տեղամասը՝ Չարենց-Շահումյան փողոցների խաչմերուկից մինչև Չարենց-Ելենովկա փողոցների խաչմերուկ ընկած հատվածը՝ 4824քմ, ասֆալտապատվում է այս տարվա սուբվենցիոն ծրագրի շրջանակներում: Ներկայումս ընթանում են շինարարական աշխատանքները: Ծրագրի նախնական արժեքը եղել է 66.159.68 հազ. դրամ, որի 40%-ը՝ համայնքային ներդրում:

Մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված կապալառու կազմակերպությունը ծրագիրն իրականացնում է 42մլն. դրամով:

Երեք փողոցներն էլ գտնվում են բանուկ մասերում, ունեն մեծ նշանակություն, տասնամյակներ շարունակ խնդիրը առկա է և այս տարի այն կստանա լուծում:

Ճանապարհաշինության ևս մեկ ուղղություն, որ տասնամյակներ շարունակ դարձել է համայնքային առաջնահերթություններից մեկը Սևան քաղաքի Գոմաձոր և Ցամաքաբերդ թաղամասերը միացնող ճանապարհահատվածն է: Այս ճանապարհահատվածի երկարությունը շուրջ 5.8կմ է, գտնվում է խիստ անմխիթար վիճակում: Այն ունի ոչ միայն ներհամայնքային կարևոր նշանակություն, այլ նաև տարանցիկ ուղի է:

Այս ճանապարհահատվածի հիմնանորոգումն ընդգրկված է ՀՀ կառավարության այս տարվա ճանապարհաշինարարական ծրագրերում:

Այս օրերին բարեկարգման աշխատանքներ են ընթանում Սևանի կենտրոնական տարածքներից մեկում. նորոգվում է Գործարանային փողոցի թիվ 2 շենքի արևմտյան հասցեում գտնվող անցուղին: Աշխատանքները մեկնարկել են հունիսի 10-ից:

Ծրագիրն իրականացվում է «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում» ծրագրի, ինչպես նաև «Վարձատրվող հասարակական աշխատանքների իրականացում» երկկողմ՝ Սևանի համայնքապետարանի և Սևանի զբաղվածության կենտրոնի միջև ստորագրված պայմանագրի շրջանակներում:

Սևան քաղաքի այդ հատվածը, որը կենտրոնական է, կապում է քաղաքի գլխավոր փողոցը միկրոթաղամասերի հետ, ինչպես նաև ելք է դեպի մայրուղի, տևական ժամանակ գտնվում էր անմխիթար վիճակում, ինչպես նաև անցուդարձի համար խիստ անհարմար էր:

Խնդրին լուծում է տրվում այս ծրագրի միջոցով, որի ընթացքում նախատեսված են 470քմ մակերեսով ասֆալտբետոնյա ծածկույթի քանդում, բազալտե աստիճանների քանդում, տարածքի հարթեցում, ցեմենտավազյա հարթեցնող շերտի տեղադրում, բազալտյա եզրաքարերի տեղադրման համար բետոնացում, բետոնյա հիմքի կառուցում աստիճանների տեղադրման համար և այլն:

Արդյունքում կունենանք ևս մեկ բարեկարգ տարածք, որի իրականացման համար համայնքը ևս ունի իր ֆինանսական ներդրումը:

Այս ծրագրի շրջանակներում նախատեսված է ևս մեկ ենթածրագիր, որը կմեկնարկի օգոստոս ամսին:

Միաշերտ ասֆալտապատման աշխատանքներին զուգահեռ Սևանի թերակղզի տանող ճանապարհի հիմնանորոգումից առաջ իրականացված ֆրեզերավորման արդյունքում Գեղարքունիքի մարզպետարանի կողմից համայնքին տրամադրված ասֆալտբետոնե ծածկույթի երկրորդական հումքով /ֆրեզ/ հարթեցվել և բարեկարգվել են Օրբելի փողոցը և Գործարանային փողոցի վերջնամասը:

Համայնքում շարունակվում են բարեկարգման և ասֆալտապատման աշխատանքները:

Ներդրումային ծրագրեր

Համայնքում իրականացվող բարեփոխումների, զարգացումների առանցքում կարևորվում են ներդրումային ծրագրերը: Այն, ինչը հնարավոր չէ կյանքի կոչել միայն տեղական բյուջեի միջոցների հաշվին, դառնում է իրատեսական կառավարության, տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության շնորհիվ:

Սևանի թիվ 2 «Զարթոնք» մանկապարտեզը հիմնանորոգումից հետո այս տարվա ապրիլի 1-ին անցավ իր բնականոն աշխատանքին: Հիմնանորոգման աշխատանքներն իրականացվեցին Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և համայնքի համագործակցությամբ:

Ծրագրի արժեքը 215մլն. էր, որից 15մլն.-ը ներդրել է համայնքը: Հիմնանորոգմանը հաջորդել են կահավորման աշխատանքները, որի մի մասը համայնքային ներդրում է: Մանկապարտեզին աջակցել է նաև Focus on Children Now /Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ/ բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը՝ ի դեմս ծրագրերի ղեկավար Անահիտ Քալանթարյանի:

«Զարթոնք»-ի վերաբացումից հետո մանկապարտեզ էին այցելել Անահիտ Քալանթարյանը և ԱՄՆ-ից Հիլդա Գրիգորյանը:

Այցի նպատակն էր մանկապարտեզին և փոքրիկներին անհրաժեշտ պարագաների հերթական խմբաքանակի նվիրատվությունը: Մանկապարտեզին նվիրաբերվել են անկողնային պարագաներ, սպիտակեղեն, հիգիենայի միջոցներ, բազմատեսակ խաղալիքներ՝ շուրջ 1.5մլն. դրամ արժողությամբ:

«Հայ դպրոց» հիմնադրամը, որ գործում է ԱՄՆ-ում, հերթական այցը կազմակերպեց Գագարինի մանկապարտեզ: Մանկապարտեզին նվիրաբերվեց գույք՝ ուսուցչական սեղան և աթոռ, գրատախտակ, 17 կոմպլեկտ նախադպրոցական սեղան-աթոռ /յուրաքանչյուրը՝ 1 սեղան, 4 աթոռ/, 17 հատ նախադպրոցական պահարան:

Գագարին գյուղում ընթացքի մեջ է Գագարինի մշակույթի տան հիմնանորոգումը, որն իրականացվում է հանրապետության մարզերում առաջնահերթություն համարվող ծրագրերի շրջանակներում՝ Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից: Սևանի համայնքապետարանը համաֆինանսավորում է ծրագիրը և ծրագրի մեկնարկի համար հատկացրել է 3մլն. 768 հազ. դրամ:

Այդ շրջանակներում իրականացվել է նաև Գագարինի միջնակարգ դպրոցի տանիքի հիմնանորոգումը:

Ս. Զաքարյանի անվան մշակույթի պալատի շենքի հիմնանորոգման աշխատանքները գտնվում են վերջին փուլում, որն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներով: Քաղաքի մշակութային կյանքում այս ծրագրի շնորհիվ կարձանագրվի դրական փոփոխություն, որը հիմնավորապես կփոխի Ս. Զաքարյանի անվան մշակույթի պալատում իրականացվող աշխատանքների որակը և այդ շենքում գործող մի շարք կազմակերպությունների աշխատանքային պայմանները:

Ընթացող ծրագրերին զուգահեռ Սևանի քաղաքային զբոսայգու հարևանությամբ իր ավարտուն տեսքն է ստանում ֆուտբոլի մարզադաշտը: Մարզադաշտի առկայությունը միաժամանակ ենթադրում է ֆուտբոլի դպրոցի հիմնում, ֆուտբոլային ավանդույթների վերականգնում, ինչպես նաև արդեն «Սևան» անունը կրող ֆուտբոլի թիմի տնային խաղերի անցկացում

Քանի որ ապագա դպրոցը գտնվում է քաղաքային զբոսայգու հարևանությամբ, շինարարական հիմնական աշխատանքներին զուգահեռ բարեկարգվել են նաև քաղաքային այգու տարածքը:

Սևան համայնքը մայիսի 11-ին մասնակցել է «Իմ քայլը հանուն Գեղարքունիքի» բիզնես ֆորումին՝ ներկայանալով համայնքում գործող սոցիալական ձեռնարկատիրությունների հաջողություններով, գործարար գաղափարներով և արդեն իսկ կյանքի կոչված ծրագրերով:

Ընթացիկ ծրագրեր

Քաղաքում ավտոմեքենաների և անցորդների երթևեկի կազմակերպման նպատակով կատարվել են գծանշման աշխատանքներ, որոնց միջոցով կանոնակարգվել է նաև ճանապարհային անվտանգությանը վերաբերող խնդիրը:

Մեծ ուշադրություն է դարձվում գիշերային Սևանը լուսավոր, անվտանգ դարձնելու ուղղությամբ: Անցած ժամանակահատվածում ոչ միայն ապահովվել է լուսավորության ցանցի անխափան շահագործումը, այլ նաև ավելացել են լուսավորված նոր փողոցներ և քաղաքում, և Գագարին գյուղում: Հավելենք նաև, որ բոլոր միկրոթաղամասերի բակային հատվածները լուսավորված են երկու փնջով:

Ուշադրություն է դարձվել նաև տանիքաշինությանը, բազմաբնակարան շենքերում առկա խնդիրներին:

Համայնքապետարանի կողմից մշակված աշխատառճի շնորհիվ հնարավոր է դարձել աջակցել համատիրություններին, մասնավորապես՝ ներկայացված աշխատանքների ծավալին տեղում ծանոթանալուց հետո հատկացվում է ֆինանսական աջակցություն կամ տրամադրվում է նյութատեխնիկական օգնություն: Երկու տասնյակից ավել շենքերում մի քանի ամսվա ընթացքում հնարավոր է եղել լուծել տարիներով կուտակված մի շարք խնդիրներ:

Աբովյան 15 - շենքի նկուղային հարկի ընդհանուր կոյուղագծից մինչև դիտահոր հիմնանորոգման աշխատանքներ.

Նաիրյան 153 / 12 - տանիքի վերանորոգում.

Գագարինի զբոսայգի - վերանորոգում.

Նալբանդյան 63 շենք, 4-րդ մուտք - ընդհանուր կոյուղագծի վերանորոգում.

Սայաթ-Նովա 26 - ջրահեռացման և կոյուղատար խողովակների վերանորոգում և փոխարինում.

Կարմիր բանակ 35 - արևմտյան ճակատի պատի պանելների միացման հանգույցների բետոնացում և տանիքի մասնակի վերանորոգում.

Սայաթ-Նովա 22 - նկուղային հարկի ընդհանուր կոյուղագծի նորոգում.

Շահումյան 37 շենք - 2-րդ մուտքի վերանորոգման աշխատանքներ

Ծրագրերի իրականացում միջազգային կազմակերպությունների հետ

Սևան համայնքում իրականացվում է «ԵՄ-ն Սևանի համար՝ բիզնեսի զարգացման և նորամուծության ՓՄՁ հարթակ» ծրագիրը՝ ԵՄ համաֆինանսավորմամբ, որը մեկնարկել է 2018թ-ին:

Ծրագրի նպատակն է զբաղվածության, որակի, կայունության, անվտանգության և աշխատաշուկայի որակական աճի վրա բազմակողմանի ազդեցության միջոցով

նպաստել համայնքում և ողջ տարածաշրջանում կայուն տնտեսական աճի արձանագրմանը:

Երկամյա ծրագրի աշխատանքների առանցքում գերակա է լինելու Սևան համայնքի վերափոխումը՝ այն ֆինանսապես անկախ, տնտեսապես կայուն, սոցիալապես ապահով դարձնելը:

Սևանն անդամակցում է «Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման» ծրագրին և դրա շրջանակներում էլ ներկայացրել է հաջողված և մրցունակ առաջարկ:

Բիզնես կենտրոնի միջոցով իրականացվող ծրագիրն էլ հավակնում է ունենալ տեսանելի արդյունք, քանի որ առաջնահերթություններ են ընտրված մի շարք կարևոր ուղղություններ՝ ֆիզիկական ենթակառուցվածքների տրամադրում բիզնես համայնքին, համագործակցություն և կապերի ուժեղացում խորհրդատվական և տեխնիկական աջակցություն գործարարներին և աշխատանք փնտրողներին:

Գեղարքունիքի մարզի համար այս կենտրոնը լինելու է ինկուբատոր, որտեղ ամեն օր մշակվելու են գաղափարներ ու տարածվելու:

«ԵՄ-ն Սևանի համար՝ բիզնեսի զարգացման և նորամուծության ՓՄՁ հարթակ» ծրագրի առանցք հանդիսացող բիզնես կենտրոնը, որի կառուցումը կմեկնարկի օրերս, ներառելու է աշխատանքային 15 համընդհանուր տարածքներ գործարարների համար, աշխատանքային հանդիպումների նորարական, կոնֆերանս սենյակներ, տեղեկատվական և խորհրդատվական կենտրոններ, որտեղ իրականացվելու են բիզնեսի զարգացման խորհրդատվություն և դասընթացների կազմակերպում, մասնավորապես՝ բիզնես և ռազմավարական պլանավորում, նորարայնության տեղայնացում, շուկայական կապեր, արտահանում ներկրում ուղղություններով:

Կենտրոնի մասնագետները կօժանդակեն նորամուծություններին, կաջակցեն բիզնեսների ֆինանսական և շուկայական կապերի հզորացմանը, Սևանի տարածաշրջանում աշխատանք փնտրողներին մասնագիտական վերապատրաստումների միջոցով կտան հնարավորություն մրցունակ լինելու աշխատաշուկայում, միաժամանակ կաջակցեն աշխատանքի տեղավորման հարցում:

Սևան համայնքը ծրագիրն իրականացնում է Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատի հետ:

Շուտով բիզնես կենտրոնը կբացի իր դռները և սկսնակների ու արդեն փորձառու գործարարների համար կդառնա լավագույն միջավայր և փորձի փոխանակման արդյունավետ հարթակ:

Ծրագրի շրջանակներում բացվել է աշխատում է 6 հոգի, որոնք իրականացնում են մասնագիտական գործունեություն:

Դեռևս 4 տարի առաջ Սևան համայնքի համար մեկնարկել է ևս մեկ կարևոր՝ «Կոտայքի մարզի կոշտ թափոնների կառավարում» ծրագիրը, որը ֆինանսավորվում է

Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի կողմից: Ծրագրի առանցքում աղբահանության խնդիրների կարգավորումն է:

Ծրագիրն ունի մի քանի բաղադրիչ և հեռահար նպատակներ, որն ընդգրկում է բնապահպանական և սոցիալական գործողություններ, նոր աղբավայրի շահագործում, մաքրության ծառայությունների դիմաց վճարների հավաքագրման նոր մեխանիզմներ, նոր և ժամանակակից տեխնիկայի, մասնագիտացված սարքավորումների տրամադրում:

Այս ծրագրի իրականացմամբ համայնքը հնարավորություն կունենա աղբահանության ոլորտում գրանցել լուրջ ձեռքբերումներ՝ և տեխնիկապես, և աշխատանքների որակական բարելավման առումներով:

«Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունը Սևան համայնքում իրականացնում է «ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ հմտություններ ապագայի համար» երկամյա ծրագիրը, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում ծրագրի գործընկերն է «ՕքսԵՋեն» երիտասարդների և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամը: Հայաստանում ծրագիրն իրականացվելու է 10 քաղաքներում, Գեղարքունիքի մարզում՝ Սևան քաղաքում:

Ծրագրի շահառուները երիտասարդներն են, ովքեր ներգրավված են համայնքի զարգացման ծրագրերում: Արդեն կյանքի է կոչվել «Շարժական ART GALLERY» ծրագիրը, որի նպատակն է՝ նպաստել երիտասարդ արվեստագետների, ստեղծագործողների ինքնաարտահայտմանը, հանրային ճանաչմանը, ինչպես նաև համայնքի մշակութային կյանքի աշխուժացմանը:

Ապակենտրոնացված համագործակցություն

Սևան-Գրենոբլ ապակենտրոնացված համագործակցությունը 15-ամյա կենսագրություն ունի: 2019թ. 1-ին կիսամյակում էլ համագործակցային ուղղություններով իրականացվել են ծրագրեր:

Մասնավորապես՝ մարտ-ապրիլ ամսիներին համայնքում անցկացվել են ֆրանկոֆոնյան օրեր՝ բազմաբնույթ միջոցառումներով, նախաձեռնություններով: Հունիսին մեկնարկել են ֆրանսերենի ուսուցման ամառային դպրոցի դասերը:

Շարունակվում է համագործակցված աշխատանքը այլընտրանքային էներգիայի ներդրման ճանապարհին:

Ծրագրի նպատակն է զարգացնել վերականգնվող էներգիան Սևանի տարածաշրջանում:

Պիլոտային ծրագրերին զուգահեռ իրականացվում է 3 տարվա ընթացքում վերադարձելիության սկզբունքով գործող ֆինանսավորման ծրագիրը, որի շրջանակներում սեփական առանձնատներում և բնակարաններում տեղադրվել և տեղադրվելու են արևային ջրատաքացուցիչներ և ջեռուցման համակարգ:

Ծրագրի բաղադրիչներից է նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների շենքերում ջրատաքացուցիչների տեղադրումը:

Էներգախնայողության այս արդյունավետ քայլն ունի նաև բնապահպանական նշանակություն, որի ուղղությամբ առաջիկայում էլ Սևան համայնքում իրականացվելու են նոր ծրագրեր, արդեն կան նախնական պայմանավորվածություններ:

Սևան և Գրենոբլ քաղաքների միջև համագործակցային ուղղություններից մեկը՝ առողջապահականը, նախորդ տարիներին գրանցել է լուրջ հաջողություններ՝ կյանքի կոչված ծրագրերի տեսքով՝ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններում, բժշկական կենտրոնում վերանորոգման, կահավորման, տեխնիկական վերազինման և մասնագիտական վերապատրաստման ծրագրեր:

Բոլորող 15-ամյա համագործակցությունը գործընկերային շրջանակի մեջ է ներառել Գեղարքունիքի մարզը, Ֆրանսիայի Հանրապետության Իզերի մարզի դեպարտամենտի խորհուրդը: 2018 թվականի ընթացքում սկսված, սակայն տարբեր պատճառներով անավարտ մնացած ծրագրերն ավարտին հասան այս տարի:

Առաջիկայում Սևան համայնքում նախատեսված է իրականացնել առողջապահական ծրագիր Գագարին գյուղում, որտեղ վերանորոգվելու և կահավորվելու է ամբուլատորիայի համար նախատեսված տարածքը:

Գրենոբլի քաղաքապետարանի ֆինանսավորմամբ և ֆրանսիական «Բժշկական օգնություն եւ զարգացում» ասոցիացիայի օպերատրությամբ ֆրանսիայից վերջերս ստացվել է բուժսարքավորումների հերթական խմբաքանակը՝ տեսողությունը ստուգելու ակնոց՝ նախատեսված ապակիներով, ճեղքային լամպ, ռեֆրակտոմետր, պուլսօքսիմետր /թթվածնով հագեցվածությունը ստուգելու սարք/, որը հանձնվել է բժշկական կենտրոնին: Համայնքի մանկապարտեզների բուժկետերն էլ ստացել են նախապես պատվիրված գույքը և անհրաժեշտ սարքավորումները:

Համատիրությունների գործունեություն

2003թ-ից բնակարանային տնտեսության կառավարումը իրականացվում է համատիրությունների միջոցով:

Համայնքում գործում է 5 համատիրություն, որից մեկը՝ Գագարինում: Դրանց միջոցով իրականացվում է 213 բազմաբնակարան շենքերի կառավարումը, սպասարկումն ու պահպանումը:

Շենքերի զգալի մասը մեկից ավելի հիմնախնդիրներ ունի՝ սկսած տանիքներից մինչև ներքին խողովակաշարեր, որոնց ուղղությամբ իրականացվում են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ: Իհարկե, դեռևս հեռու ենք շոշափելի արդյունքներից, սակայն տեղական իշխանությունները ձգտում են և ֆինանսական ներդրումների շնորհիվ և կազմակերպչական հարցերը լուծելիս կանգնել համատիրությունների նախագահների կողքին:

Չնայած համայնքապետարանն իր գործառույթների շրջանակներում իրավասու չէ նման խնդիրները լուծելու, շենքերն էլ համատիրության կազմում են, և բնակիչներն ունեն իրենց ոչ միայն իրավունքներ, այլ նաև պարտականություններ, սակայն հաշվի առնելով սոցիալական վիճակը, բնակչին չենք կարող թողնել իրենց խնդիրներին դեմ առ դեմ:

Շատ եմ կարևորում այն հանգամանքը, որ համատիրությունների նախագահները իրենց գործունեության ընթացքում ոչ միայն մշտական կապի մեջ լինեն տեղական իշխանության հետ, այլ նաև բնակիչների՝ իրենց աշխատանքները դարձնելով թափանցիկ, հաշվետվողական: Աշխատանքային փորձը և շփումները ցույց են տալիս, որ բնակիչը իրեն չի զգում շենքի սեփականատեր: Դրա վկայությունն է նաև բաժնային սեփականության պահպանման նպատակով նախատեսված հավաքագրումների ցածր մակարդակը:

Բազմաբնակարան շենքերի համատեքստում կա ևս մեկ խնդիր՝ կապված բազմահարկ 29 շենքերի հետ, որոնք վերաբերում են վերելակների սպասարկմանը և գործարկմանը:

Համայնքապետարանը խնդրին լուծում տալու նպատակով, վերելակների անվտանգ և անխափան գործարկումն ապահովելու համար վերելակների սպասարկման գործառույթները հանձնել է «Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ին:

Կոմունալ տնտեսություն

Համայնքի համար կենսական նշանակություն ունի կոմունալ տնտեսության բնականոն գործունեությունը: Մենք այս ոլորտում ունենք կոնկրետ նպատակներ՝ ունենալ այնպիսի կառույց, որը կհամակարգի կոմունալ տնտեսության ոլորտի գործառույթները՝ աղբահանումից մինչև կանաչապատում, սանմաքրման աշխատանքների կազմակերպումից մինչև լուսավորության ցանցի գործարկում:

Անշուշտ, դժվարությունները ամեն քայլափոխի են. դրանք վերաբերում են և կազմակերպչական հարցերին, և կադրերին, և տեխնիկական վերազինմանն ու համապատասխան մշակույթի ձևավորմանը: Անցած ամիսների ընթացքում կոմունալ տնտեսության տեխնիկան վերանորոգվել է, ձեռք են բերվել անհրաժեշտ պահեստամասեր:

Կոմունալ տնտեսության աշխատանքներում գրանցվել են էական տեղաշարժեր:

Ձմռան ամիսներին իրականացվող աշխատանքների առանցքում ձյան մաքրումն ու տեղափոխումն էր:

Ուշադրության կենտրոնում համայնքի ողջ տարածքն էր՝ գլխավոր փողոցից մինչև երկրորդական փողոցներ, Գոմաձոր, Ցամաքաբերդ թաղամասերը, Գագարին գյուղը: Ձնամաքրման աշխատանքները շարունակվել են նաև հանգստյան օրերին: Ձյան տեղումներին զուգահեռ իրականացվել է մաքրման գործընթացը:

Մաքրմանը հաջորդել է ճանապարհների՝ ավազով մշակման գործընթացը, որի արդյունքում երթևեկության և հետիոտնի տեղաշարժի համար ապահովվել է բնականոն վիճակ:

Գարնանը աշխատանքների ուղղվածությունը փոխվել է՝ առանցքում մնալով մաքրությունը: Էտման և սանիտարական հատման աշխատանքներին հաջորդել են ծառերի բների սպիտակեցման, կանաչ տարածքների խնամքի, ձևավորման աշխատանքները:

Ամռան ընթացքում կոմունալ տնտեսության աշխատանքների ծավալը կրկնապատկվել է՝ պայմանավորված առափնյա գոտում իրականացվող տնտեսական գործունեությամբ, քաղաք այցելողների և զբոսաշրջիկների աճով:

Քաղաքում ավելացել են նաև աղբամանները:

Կոմունալ տնտեսության աշխատանքների կազմակերպման նպատակով համայնքային բյուջեից հատկացվել է 38705.7 հազ. դրամ /աղբահանության գծով. աղբահանության գումարները մուտքագրվում են համայնքային բյուջե/, պարտքերի մարման գծով սուբսիդիա է տրամադրվել 5000.0 հազ. դրամ: Աղբահանության ծառայությունների դիմաց հավաքագրվել է 16174.6 հազ. դրամ:

Սևան համայնքն ակտիվորեն մասնակցել է նաև «Մաքուր Հայաստան» նախաձեռնությանը: Համայնքում անցկացվել է 2 համապետական, 1 մարզային շաբաթօրյակ: Մասնակիցների թիվը հասնում էր մի քանի հազարի, ներգարվվել է նաև անհրաժեշտ քանակով տեխնիկա:

Սոցիալական

Համայնքում իրականացվում է «Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագիրը՝ «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի կողմից: Ծրագիրը թիրախավորում է սոցիալական ոլորտը և նպաստելու է ՀՀ-ում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների և ընտանիքների սոցիալական խնդիրների վերհանմանը և դրանց լուծմանն ուղված մեխանիզմների բարելավմանը՝ մշակելով բարելավման առաջարկություններ:

6 ամսյա տևողությամբ ծրագրի ընթացքում ստեղծվել են ինստիտուցիոնալ երկխոսության և համագործակցության հարթակ ՔՀԿ-ների և պետական մարմինների միջև, «Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանության ցանց» կոալիցիայի միջոցով, որտեղ պետական և հասարակական հատվածները ոչ միայն երկխոսելու են, այլև մշակելու և իրականացնելու են համատեղ ռազմավարություններ և ծրագրեր:

Ծրագրային բաղադրիչներից են կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող /ԿԴԻԳ/ ընտանիքների և երեխաների դեպքերին արագ արձագանքումը, ՀԿ սեկտորի և պետական մարմինների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի համադրումը ըստ իրական կարիքների, ՀԿ-սեկտորի և պետական մարմինների հետ սոցիալական աջակցության ոլորտում համատեղ կարճաժամկետ և երկարաժամկետ ռազմավարությունների մշակումը և իրականացումը, Սոցիալական աջակցության ոլորտում տեղական և ազգային մակարդակում շահերի պաշտպանությունը և ջատագովությունը, կոռուպցիայի դեմ պայքարը և թափանցիկության ապահովումը, Սոցիալական ոլորտում արդյունավետ ծրագրերի իրականացումը, օրենսդրական դաշտի և մեխանիզմների շարունակական բարելավումը:

Ծրագիրն իրականացվում է 4 մարզի 4 համայնքներում՝ Լոռու մարզ, Ալավերդի համայնք, Տավուշի մարզ, Դիլիջան համայնք, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք և Կոտայքի մարզ, Հրազդան համայնք:

Ծրագրի առավելությունն այն է, որ խնդրի շուրջ միավորվելու են շահագրգիռ կողմերը՝ պետական և ոչ պետական կառույցներ, իսկ արդյունքում սպասվում է սոցիալական աջակցության օրենսդրական բարեփոխումների նախաձեռնում, սոցիալական աջակցության երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի մշակում և իրականացում:

Տեղական ինքնակառավարման մարմինները, համագործակցելով սոցիալական աջակցության տարածքային գործակալության հետ, այս ծրագրի շրջանակներում և ենթադրվում է՝ նաև հետագայում կատարելու են դեպքերի վարում, կազմելու են բազմաշահագրգիռ սոցիալական ծրագրեր:

Ծրագրի մեկնարկից առաջ ստորագրվել է համագործակցության Հուշագիր Սևան համայնքի և «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի միջև:

«Սևան քաղաքում բացվելու է մանկական վերականգնողական կենտրոն Ջինիշյան հիշատակի հիմնադրամի աջակցությամբ, իսկ 2021թվականից առողջապահության նախարարությունը իր վրա կվերցնի այդ կենտրոնի ֆինանսավորումը:

Այդպիսով, Սևանի տարածաշրջանի մոտ 100 երեխաներ կստանան իրենց անհրաժեշտ վերականգնողական բուժօգնությունը հենց տեղում:

Ծրագրի թիրախը Սևան համայնքն է և տարածաշրջանի գյուղական համայնքները:

Երեխաների կարիքներին համապարփակ արձագանքման ապահովումը կախված է առողջապահական, կրթական, սոցիալական ծառայությունների կարողություններից:

Հիմնադրամը, հաշվի առնելով առկա իրավիճակը, աշխատում է վերաբացել ցերեկային խնամքի կենտրոն, որը սպասարկելու է հաշմանդամության և զարգացման խանգարումներ ունեցող երեխաներին: Նման կենտրոնի ստեղծմամբ անապահով երեխաները հնարավորություն կստանան բարելավել իրենց ֆիզիկական և հոգեբանական պայմանները, դառնալ հասարակությանը լավ ինտեգրված անդամներ:

Կենտրոնը գործելու է Դեմիրճյան 17 հասցեում: Սևանի համայնքապետարանի կողմից այդ հասցեում գտնվող երկհարկանի տարածքը 3-5 տարվա ժամկետով անվարձահատույց հանձնվել է կենտրոնին:

Կենտրոնի հիմնական գործառույթներն են մասնագիտացված ցերեկային խնամքի կենտրոնի միջոցով հաշմանդամություն և զարգացման խանգարումներ ունեցող երեխաների համար մասնագիտացված աշխատանքների իրականացում, որի շնորհիվ էականորեն կբարելավվի նրանց կյանքի որակը: Կենտրոնում աշխատելու է 12 հոգուց բաղկացած անձնակազմ:

Սոցիալական ծրագրերի շարքում առանցքային է աջակցության տրամադրումը սոցիալապես անապահով խավին:

2019թ. հունվար-հունիս ամիսներին սոցիալական աջակցություն է ստացել 239 քաղաքացի՝ 10-40 հազ. դրամ, ընդհանուր գումարը՝ 5.477.1 հազ. դրամ:

Անցած ամսիներին պարգևավճարներ են հատկացվել զոհված ազատամարտիկների մայրերին, կանանց, տեղական և միջազգային մրցաշարերից հաղթանակով վերադարձած մարզիկներին, նրանց մարզիչներին:

Համայնքապետարան հասցեագրված դիմումներ և գրություններ

Սևանի համայնքապետարանում ամփոփվել են ընթացիկ տարվա կիսամյակային արդյունքները:

Համաձայն համայնքի ղեկավարի աշխատակազմի կողմից տրամադրված ամփոփագրերի՝ վեց ամիսների ընթացքում քաղաքացիների, բնակիչների կողմից համայնքի ղեկավարին է հասցեագրվել 650 դիմում, որոնք ներառում են տարբեր խնդիրներ, հարցեր և առաջարկներ՝ սոցիալականից մինչև արտոնությունների սահմանում, կենցաղային խնդիրներից մինչև հասցեի տրամադրում, գույքահարկի բազայում փոփոխություններից մինչև շինթույլտվություն: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այդ թիվը եղել է 550:

ՀՀ կառավարությունից և գերատեսչություններից, տարբեր կազմակերպություններից ստացվել է 382 գրություն, որոնց գործող կարգի համաձայն, տրվել են պատասխաններ, ուղարկվել են ակնկալվող տեղեկատվություններ,

համայնքին վերաբերող տվյալներ: Անցյալ տարի հունվար - հունիս ամիսներին մուտքագրվել է 329 գրություն: Իրավաբանական անձանցից, համայնքում գործող կազմակերպությունների ,ընկերությունների կողմից համայնքապետարան է մուտքագրվել 364 գրություն:

2018-ի նույն ժամանակահատվածում այդ թիվը եղել է 211: Համայնքապետարանից ուղարկված գրությունների վիճակագրությունն այսպիսին է՝ համայնքի ներսում՝ 250, համայնքից դուրս՝ 291 գրություն:

Նախորդ տարի նույն ժամանակահատվածում համապատասխանաբար՝ 256 և 207:

2019թ. հունվար-հունիս ամիսներին համայնքի ղեկավարի մոտ հերթագրվել և ընդունելության է մասնակցել 624 քաղաքացի: Անցյալ տարի ընդունելության մասնակցածների թիվը եղել է 511:

Սևանի համայնքապետարան գրությունները, դիմումները, տեղեկատվության հարցումները ստացվել և ուղարկվել են փոստով, էլեկտրոնային տարբերակով և առձեռն:

Ավագանու գործունեություն

Տեղական ինքնակառավարումն առանց ավագանու գործունեության չի կարող լինել լիարժեք: Մենք խնդիր ունենք առավել համագործակցված և լայնաշերտ աշխատելու ավագանու հետ, որպեսզի կայացրած որոշումներն էլ լինեն արդյունավետ և նպաստեն համայնքային կյանքի բոլոր ոլորտների բնականոն աշխատանքին:

2018-ի 1-ին կիսամյակում համայնքի ավագանին գումարել է 4 նիստ, կայացրել է 31 որոշում:

Ավագանու գործունեության թափանցիկության և հրապարակայնության նպատակով նիստերը հեռարձակվում են առցանց, ապա տեղադրվում պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում:

Քաղաքացիական հասարակություն- համայնք

Քաղաքացիական հասարակության ստեղծման ճանապարհին անհրաժեշտ է բոլոր այն կառույցների ու կազմակերպությունների գործունեությունը, որոնք հնարավորություն կտան մեր աշխատանքները դարձնել առավել ժողովրդավար, թափանցիկ և ընկալելի:

Համայնքաապետրանն աշխատում է համայնքում գործող ՀԿ-ների և ասոցիացիաների հետ, միասին հեղինակում են համաքաղաքային միջոցառումներ, հանդիպումներ:

Համայնքապետրանի պատասխանատուները բազմիցս են մասնակցել ՀԿ-ների աշխատանքային հանդիպումներին և սեմինարներին, ներկայացրել տարբեր ոլորտներում մշակված ծրագրերը:

Բավականին ակտիվ է կապը համայնքում գործող հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների հետ: Կարևորելով քաղաքացիական հասարակության դերը՝ մեր գործունեությունը կառուցում ենք գործնական - ընկերային հարթության վրա, որը բավականին արդյունավետ է նաև համայնքում այդ կազմակերպությունների կողմից համայնքային կարիքների բացահայտման, առաջնահերթությունների որոշման և զարգացման ծրագրերի ներդրման համար, համատեղ միջոցառումներ և քննարկումներ կազմակերպելիս:

ՀՈԱԿ-ների գործունեություն

Համայնքային կյանքի բաղկացուցիչ մասն են կազմում համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները, որոնց նպատակային և ամենօրյա գործունեության շնորհիվ հնարավոր է դառնում կազմակերպել երեխաների նախադպրոցական կրթության, դաստիարակության, մարզական, մշակութային ուղղվածության ծրագրերը:

Պայմանավորված մշակույթի պալատի հիմնանորոգմամբ՝ ժամանակավորապես չեն գործում այդտեղ տեղակայված ՀՈԱԿ-ները՝ Հովի. Այվազովսկու անվան արվեստի դպրոցը, Վ. Ստեփանյանի անվան գրադարանների կենտրոնացված համակարգը և համայնքային մշակութային կենտրոնը:

Համայնքի 5 նախակրթարաններն աշխատում են ծանրաբեռնվածությամբ՝ իրականացնելով երեխաների նախադպրոցական կրթության, դաստիարակության, խնամքի, անվտանգ միջավայրի ապահովման գործառույթները: Նախադպրոցական այս հաստատություններն ապահովում են պահանջվող չափորոշիչները:

2017թ. մարտի 1-ից մանկապարտեզներում ծնողական վարձավճարները զրոյացվել են, որը նաև իմ նախընտրական ծրագրերի դրույթներից է: Սոցիալական այս ձեռնարկի շնորհիվ երեխաների համար ստեղծվել են հավասար պայմաններ: Փետրվքար-հունիս ամիսներին համայնքային բյուջեից մանկապարտեզներին հատկացվել է 72089.3 հազ. դրամ /ամփոփը ներկայացված է համայնքի ՆՈՒՀ-երի ֆինանսավորում բաժնում/:

Համայնքում գործում են նաև նախակրթարաններ, որոնցից մեկը «Բողբոջ» մանկապարտեզի հենքի վրա, երկուսը՝ Ցամքաբերդի և Գոմաձորի միջնակարգ դպրոցների հենքի վրա:

6-ամսվա միջինացված տվյալներով համայնքի մանկապարտեզներ և նախակրթարաններ են հաճախել 550 երեխա:

Այս տարի մանկապարտեզներից 1-ին դասարան է հաճախելու 256 երեխա:

Մարզամշակութային

Տոնացույցում նշված համապետական բոլոր օրերը համայնքում նշվել են հավուր պատշաճի, որին մասնակից են դարձել համայնքի բնակիչները, համայնքում հյուրընկալվածները: Պայմանավորված մշակույթի պալատի հիմնանորոգման աշխատանքներով՝ միջոցառումներն անցկացվել են եղել են բացօթյա: Համայնքը մասնակցել է նաև «Արի պարի Քոչարի» համահայկական ֆլեշմոբին, որի կազմակերպիչը եղել է Գրենոբլի հայկական համայնքը:

2019-ի 1-ին կիսամյակում մարզաշխարհում գրանցվել են մի շարք ձեռքբերումներ:

Ն. Դազարյանի անվան մարզադպրոցում աշխատանքները թևակոխել է մի նոր փուլ: Ընթացող ամենօյա պարապմունքները, դպրոցում տեղի ունեցող առաջնությունները, ինչպես նաև մեր մարզիկների լավագույն մրցելույթները հանրապետությունում և արտերկրում դրա լավագույն վկայությունն են:

Մարզադպրոցի սաները մասնակցել են մարզային հանրապետական և միջազգային առաջնությունների, մրցումների՝ դառնալով մրցանակակիրներ, նվաճելով պատվավոր հորիզոնականներ:

«Յունիոր Սևան» ֆուտբոլային թիմը դարձել է ՀՀ 2018-2019թթ. ֆուտբոլային առաջնության 1-ին խմբի բացարձակ հաղթող:

ՀՀ նախագահի մրցանակի համար անցկացվող «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթի 1-ին փուլում հաղթող ճանաչվեց թիվ 4 «Գալիք» մանկապարատեզի թիմը, և 2-րդ մրցանակակիր թիվ 1 «Բողբոջ» թիմի հետ մասնակցեց մարզային փուլում:

Սևանի Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոցի սաները ևս ընթացիկ պարապմունքներին զուգահեռ մասնակցել են «Արտ մյուզիք» երաժշտական փառատոնին՝ գրավելով մրցանակային տեղեր, արժանանալով գրանպրիի:

Երաժշտական դպրոցի երգչախումբը մասնակցել է «Երգող Հայաստան» փառատոնի մարզային փուլին և ճանաչվել է հաղթող:

Եվ՝ մարզադպրոցում, և՝ երաժշտական դպրոցում հերթական ուսումնական տարին ամփոփվել է միջոցառումներով:

Ծրագրեր համայնքապետարանի գործունեության բարելավման նպատակով

Թափանցիկ աշխատառճի ձևավորման ճանապարհին իրականացվող ծրագրերի շարքում առանձնանում է համայնքապետարանում գործող «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ» ծրագիրը, որն առավել ամբողջական և համակարգված է դարձնում իրականացվող աշխատանքները:

Համայնք-մարզպետարան-կառավարություն փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային տարբերակը թույլ է տալիս աշխատանքները դարձնել առավել որակյալ, ռավել սեղմ ժամկետում փոխանցել համապատասխան տեղեկատվությունը:

Աշխատանքների առավել արդյունավետության նպատակով, մասնագիտական որակավորման և հմտությունների ապահովման համար աշխատակազմի համայնքային ծառայողներն անցել են ատեստավորում, մասնակցել որակավորման և վերապատրաստման դասընթացների: Համայնքն ունի իր պաշտոնական կայքէջը և ֆեյսբուքյան էջը:

Տեղական իշխանությունն իր աշխատանքները կառուցում է՝ գերակա համարելով համայնքապահպան ու համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը: